ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/28

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից 20.02.2018թ. ներկայացված բողոքը և «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 27.02.2018թ. ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/28 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 20.02.2018թ. բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն:

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է առավելագույն գումարի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների համար ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 1-ին, 2-րդ, 9-րդ չափաբաժինների համար ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացվելու դեպքում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

Հրավերի 2-րդ մասի 2.3 կետի համաձայն՝ հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով ներկայացվելու դեպքում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Ընդ որում եթե բանկային երաշխքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Հրավերի 4.3 կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, ապա հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Ընդ որում, եթե բանկային երաշխքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն հայտով՝ որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2018թ. տրված թիվ 224/06/01 բանկային երաշխիքը:

Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը գերազանցել է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը՝ 70 000 000 ՀՀ դրամը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել, քանի որ այն չի համապատասխանում 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին: Նշված որոշմանը կողմ է քվեարկել հանձնաժողովի 3 անդամ, դեմ՝ 2-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին ՀՀ կառավարության 11.08.2011թ. թիվ

1145-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարներին՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիքը պահանջել սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիք պահանջելիս հիմք ընդունել սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևը:

Երաշխիքի 1-ին կետում նշված է, որ սույն երաշխիքը հանդիսանում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումը ոչ իրավաչափ է, որի արդյունքում խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները, քանի որ ՀՀ կառավարության 11.08.2011թ. թիվ 1145-Ն որոշման համաձայն հաստատված երաշխիքը վերաբերում է պայմանագրի կատարման ապահովմանը, այլ ոչ թե հայտի ապահովմանը և զարմանալի չէ, որ նշված որոշմանը դեմ է քվեարկել 5 հանձնաժողովի անդամներից 2-ը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Խորհրդին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 29.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետով կայացված՝ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և սույն որոշումից հետո կայացված մնացած բոլոր որոշումները:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.02.2018թ. ժամը 12:20-ի և 02.03.2018թ. ժամը 11:25-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>«Դամբայ» ՍՊԸ-ի կողմից համանման բողոքով ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Դամբայ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 27.02.2018թ. համանման բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ:

Վերոհիշյալ մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն («Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն և «Վանգաս» ՍՊԸ-ն՝ համատեղ գործունեության կարգով՝ կոնսորցիումով):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.3 կետով որոշել է հետևյալը.

«Տեխնոֆրիզ» ՍՊԸ-ի, «Միքս Գրուպ» ՍՊԸ-ի, «Արամ Զարգարյան» Ա/Ձ-ի, «Դամբայ» ՍՊԸ-ի (10-րդ չափաբաժնի մասով) և «Դահոս» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացրած հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (չի ներկայացրել Հավելված 9-ով սահմանված ձևով), որի հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է նրա հայտը:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով չի ներկայացվել հայտի ապահովում միակողմանի հաստատված հայտարարության՝

տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, որի հիման վրա էլ հանձնաժողովը մերժել է նրա հայտը վերոնշյալ չափաբաժիններով:

«Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 9-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքում որպես բենեֆիցար նշված է ՀՀ ֆինանսների նախարարությունը, այնինչ պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, որի հիման վրա էլ հանձնաժողովը 9-րդ չափաբաժնի մասով մերժել է նրա հայտը:

Քննարկելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց վերոնշյալ չափաբաժիններով մերժել նրա հայտը՝ այն հիմնավորմամբ, որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին»:

«Դամբայ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ստորագրված չէ Ընկերության տնօրեն Գ.Պետրոսյանի կողմից: Գնային առաջարկը ներկայացվել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, սակայն ինչպես նշվեց, վերոհիշյալ փաստաթղթի վրա բացակայում է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը (փաստաթուղթը միայն կնքված է): Գնային առաջարկը նաև հաստատված չէ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Պետրոսյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի վրա առկա է Էմմա Դաբաղյանի էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Միևնույն ժամանակ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Պետրոսյանի կողմից Էմմա Դաբաղյանին տրված լիազորագրի համաձայն՝ վերջինս լիազորվել է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի անունից, ի թիվս այլ լիազորությունների, էլեկտրոնային եղանակով ստորագրել և ներկայացնել հայտեր ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության բոլոր արտյաններում: ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նշված լիազորագիրը ներկայացվել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, սակայն վերոհիշյալ

փաստաթղթի վրա բացակայում է Գ.Պետրոսյանի ստորագրությունը (փաստաթողթը միայն կնքված է): Լիազորագիրը նաև հաստատված չէ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Պետրոսյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 8.19-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի հրավերի երկրորդ մասը՝ հայտը պատրաստելու հրահանգը, սահմանում է հայտով ներկայացված փաստաթղթերի ցանկը, որոնց շարքում որպես հայտի փաստաթուղթ սահմանված չէ լիազորագիրը:

Հրավերի երկրորդ մասի 2.7 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

Ինչ վերաբերում է լիազորագրի իրավական կարգավորմանը, ապա այն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածով: Մասնավորապես, վերոհիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն և «Վանգաս» ՍՊԸ-ն համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով մրցույթի 9-րդ չափաբաժնին /սառնարանային սարքավորումներ/:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն և «Վանգաս» ՍՊԸ-ն կողմից համատեղ ներկայացված գնային առաջարկը հաստատված է միայն Էմմա Դաբաղյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«Վանգաս» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Սահակյանը համապատասխան տրված պատշաճ լիազորագրով լիազորել է Էմմա Դաբաղյանին ստորագրել ընկերության կողմից ներկայացված հայտը, մինչդեռ բացակայում է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Պետրոսյանի կողմից Էմմա Դաբաղյանին տրված պատշաճ լիազորագիր, որը իրավունք

կտար վերջինիս կողմից հաստատելու նաև «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը:

Ինչպես արդեն նշվել է, «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Պետրոսյանի կողմից Էմմա Դաբաղյանին տրվել է լիազորագիր, որի համաձայն՝ վերջինս լիազորվել է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի անունից, ի թիվս այլ լիազորությունների, էլեկտրոնային եղանակով ստորագրել և ներկայացնել հայտեր ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության բոլոր արտյանններում:

Սակայն նշված լիազորագիրը հաստատված չէ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Պետրոսյանի ոչ թղթային, ոչ էլ էլեկտրոնային ստորագրությամբ, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու հիմքով վերոհիշյալ լիազորագիրը դարձնում է օրենքի պահանջներին չբավարարող և հետևաբար՝ անվավեր:

Այսպիսով, «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն և «Վանգաս» ՍՊԸ-ն կողմից համատեղ ներկայացված գնային առաջարկը «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային թվային (նաև թղթային) ստորագրությամբ հաստատված չլինելու հիմքով չի համապատասխանում մրցույթի հրավերի առաջին մասի 8.19-րդ կետի և հրավերի երկրորդ մասի 2.7 կետի պահանջներին, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի համաձայն՝ այդ հայտը պետք է գնահատվեր հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և մերժվեր:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է սույն բողոքի առաջին մասում, մրցույթի գնահատող հանձնաժողովը, գնահատելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի և «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, վերջինիս հայտում արձանագրել է միայն մեկ անհամապատասխանություն, այն է՝ հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին, մինչդեռ ներկայացված գնային առաջարկը նույնպես ենթակա է եղել մերժման:

«Դամբայ» ՍՊԸ-ի կարծիքով՝ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի և «Վանգաս» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս՝ կիրառելի չէ նաև Կարգի 41-րդ կետի պահանջները, այն է՝ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ին անհամապատասխանություն շտկելու հնարավորություն

տալը, քանզի ինչպես արդեն նշվել է, գնային առաջարկը ենթակա չէ շտկման: Ինչ վերաբերում է լիազորագրի շտկման հնարավորությանը, ապա նույն Կարգի 41-րդ կետի ուժով, քանզի լիազորագիրը մրցույթի հրավերի երկրորդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի համաձայն, չի հանդիսանում հայտի փաստաթուղթ (հայտի փաստաթղթերի ցանկով սահմանված չէ), ուստի լիազորագիրը շտկման ենթակա փաստաթուղթ չէ:

Վերոհիշյալի հիման վրա «Դամբայ» ՍՊԸ-ն գտնում է, որ գնային առաջարկը կոնսորցիումի առանձին անդամի՝ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից հաստատված չլինելու պայմաններում, երբ հայտով չի ներկայացվել պատշաճ լիազորագիր, որով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն տրամադրել է այլ անձին ստորագրությունով հայտը հաստատելու իրավասություն՝ նման գնային առաջարկը և համապատասխանաբար նաև հայտը ենթակա էր մերժման մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից:

«Դամբայ» ՍՊԸ-ն բողոքով նշել է նաև, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 20.07.2017թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/17 որոշմամբ քննարվել են սույն բողոքում ներկայացված նմանատիպ փաստեր, և ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը գտել է, որ կոնսորցիումի մասնակցի կողմից շտկման ոչ ենթակա փաստաթուղթը բոլոր մասնակիցների կողմից չստորագրելը (բացակայել է պատշաճ լիազորագիր) հիմք է հանդիսանում կոնսորցիումի մասնակիցների կողմից ներկայացրած հայտը մերժելու համար:

Միևնույն ժամանակ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Վիճարկվող չափաբաժնով հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «Դամբայ» ՍՊԸ-ն առաջարկել է 25.272.612 ՀՀ դրամ, իսկ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն 69.393.003 ՀՀ դրամ: Երկու մասնակցի կողմից հայտերը մերժելու հիմքով նշված չափաբաժինը հայտարարվել է չկայացած:

Սակայն ներկայումս «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ն վիճարկում է իր հայտը մերժելու մասին որոշումը, և եթե վերջինիս հայտը վերագնահատվի և հաշվի չառնվի նաև սույն բողոքով ներկայացված փաստարկները, ուստի ՀՀ ՊՆ-ն ստիպված կլինի եռապատիկ թանկ (միայն այս մեկ չափաբաժնի մասով պետության կորուստը կազմում է 44.120.391 ՀՀ

դրամ) գնով կնքվել մասնակցի հետ պայմանագիր, ինչն էլ իր հերթին կխախտի Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնումների և տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

«Դամբայ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մերժել «Բագրևանյան Ղողանջ» և «Վանգաս» ՍՊ ընկերությունների կողմից համատեղ գործունեության կարգով՝ կոնսորցիումով ներկայացված հայտը, գնային առաջարկի՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Դամբայ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.03.2018թ. ժամը 11:25-ի նիստի վերաբերյալ, 23.02.2018թ. ժամը 12:20-ի և 02.03.2018թ. ժամը 11:25-ի նիստերին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են համանման բողոքով ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 01.03.2018թ. թիվ ԴՎԱ/729 գրությամբ հայտնել է, որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում ՀՀ կառավարության 11.08.2011թ. թիվ 1145-Ն որոշմամբ հաստատված բանկային երաշխիքի օրինակելի ձևին, բաղկացած է կամայական շարադրանքից, ինչը հնարավոր կիրառման ժամանակ կատարման մեծ ռիսկ է պարունակում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.02.2018թ. ժամը 12:20-ի և 02.03.2018թ. ժամը 11:25-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Բագրևանյան Ղողանջ» և «Վանգաս» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է առավելագույն գումարի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների համար ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 1-ին, 2-րդ, 9-րդ չափաբաժինների համար ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացվելու դեպքում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

3. Ընթացակարգի հրավերի 12-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի հետևյալ օրինակելի ձևը:

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է _____
(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (_____) _____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)
երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված
(բանկի անվանումը) _____
(բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) _____
2) _____
3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված
պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը
_____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)
աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:
9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:
10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

_____
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

4. «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է «Արցախբանկ» ՓԲԸ-ի կողմից 26.01.2018թ. տրված թիվ E1800002 բանկային երաշխիքը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդունելով ի գիտություն, որ ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետև՝ Բենեֆիցիար/ հետ կնքվելիք ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթից բխող պարտավորությունների (հայտի ապահովում) կատարման ապահովման նպատակով «ԲԱԳՐԵՎԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետև՝ Պրինցիպալ/ պարտավոր է ներկայացնել բանկային երաշխիք 20, 810, 000 /քսան միլիոն ութ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ գումարի չափով /այսուհետև՝ Երաշխիքային գումար/ «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետև՝ Երաշխավոր/ ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ հետ համապարտ պարտապան, ի ապահովումն նշված մրցույթին մասնակցելուց բխող Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից նշված մրցույթին մասնակցելուց բխող պարտավորությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Բանկը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահաջված գումարը՝ երաշխիքային գումարի սահմաններում, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարին, առանց Բանկին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Բանկի ՀՀ Կենտրոնական բանկում կամ ցանկացած թղթակից բանկում բացված ցանկացած այլ հաշվից:

Սույնով Բանկը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերից, սույն երաշխիքի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Բանկի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը՝ սույն երաշխիքի բնօրինակը ներկայացնելու դեպքում:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Բանկի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 20 հուլիսի 2018թ.:»:

5. «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտով ներկայացվել է լիազորագիր, որով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Պետրոսյանը լիազորել է Էմմա Վասիլի Դաբաղյանին ... ստորագրել փաստաթղթեր՝ այդ թվում էլեկտրոնային եղանակով և ներկայացնել ընթացակարգի հայտեր ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության բոլոր ատյաններում, նախարարություններում, գերատեսչություններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հարկային և մաքսային մարմիններում:

6. «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագրի վրա բացակայում է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն՝ քննարկելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտի ապահովման բանկային երաշխիքը գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել Ընկերության հայտը՝ 1-3-րդ, 9-11-րդ չափաբաժինների մասով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի 20.02.2018թ. բողոքը, «Դամբայ» ՍՊԸ-ի 27.02.2018թ. համանման բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.03.2018թ. թիվ ԴՎԱ/729 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ, որի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է առավելագույն գումարի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների համար ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 1-ին, 2-րդ, 9-րդ չափաբաժինների համար ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն հրավերի հրավերի 12-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի հետևյալ օրինակելի ձևը:

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է _____
(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____(այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել
_____ (_____) _____ (այսուհետ՝

(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)
երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) _____
2) _____
3) _____:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը
_____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)
աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:
9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:
10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____
_____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի 12-րդ հավելվածով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևը լիովին համընկնում է ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևին:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացվել է «Արցախբանկ» ՓԲԸ-ի կողմից 26.01.2018թ. տրված թիվ E1800002 բանկային երաշխիքը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդունելով ի գիտություն, որ ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետև՝ Բենեֆիցիար/ հետ կնքվելիք ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2 ծածկագրով բաց մրցույթից բխող պարտավորությունների (հայտի ապահովում) կատարման ապահովման նպատակով «ԲԱԳՐԵՎԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետև՝ Պրինցիպալ/ պարտավոր է ներկայացնել բանկային երաշխիք 20, 810, 000 /քսան միլիոն ութ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ գումարի չափով /այսուհետև՝ Երաշխիքային գումար/ «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետև՝ Երաշխավոր/ ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների /ժառանգների/ հետ համապարտ պարտապան, ի ապահովումն նշված մրցույթին մասնակցելուց բխող Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից նշված մրցույթին մասնակցելուց բխող պարտավորությունների կատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Բանկը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահաջված գումարը՝ երաշխիքային գումարի սահմաններում, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարին, առանց Բանկին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, երաշխիքային գումարի սահմաններում, Բանկի ՀՀ Կենտրոնական բանկում կամ ցանկացած թղթակից բանկում բացված ցանկացած այլ հաշվից:

Սույնով Բանկը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, ինչպես նաև իր բոլոր թղթակից բանկերից, սույն երաշխիքի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Բանկի թղթակցային հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը՝ սույն երաշխիքի բնօրինակը ներկայացնելու դեպքում:

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Բանկի կողմից:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 20 հուլիսի 2018թ.:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով որոշել է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտի ապահովման բանկային երաշխիքը չի համապատասխանում ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին:

Խորհուրդը գտնում է, որ վերոհիշյալ հիմնավորմամբ մերժելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների ղեկավարները ***«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում երաշխիքը պետք է պահանջեն սույն որոշմամբ հաստատված երաշխիքի օրինակելի ձևին համապատասխան:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ ***բանկային երաշխիքի*** կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: ***Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:***

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ համապատասխան չափաբաժինների համար հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Միևնույն ժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է նաև բանկային երաշխիքի այն օրինակելի ձևը, որը համաձայն ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշման 2-րդ կետի՝ ենթակա է կիրառման «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացնելիս:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատված և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևին և իր բովանդակությամբ էականորեն տարբերվում է նշված օրինակելի ձևի բովանդակությունից:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված երաշխիքը վերաբերում է պայմանագրի կատարման ապահովմանը, այլ ոչ

թե հայտի ապահովմանը, ապա Խորհուրդը հայտնում է, որ տվյալ դեպքում նշված երաշխիքը չի կարող դիտարկվել որպես բացառապես պայմանագրի ապահովում, քանի որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է ***Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը***, այլ ոչ թե այն ներկայացնելու նպատակը, ուստի այն կարող է կիրառվել թե հայտի ապահովում և թե պայմանագրի ապահովում ներկայացնելիս: Եվ յուրաքանչյուր դեպքում ներկայացնելիս երաշխիքը համապատասխանեցվում է ըստ նպատակի:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ ***դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպիսով՝ Խորհուրդը գտնում է, որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերի պահանջներին և Կարգի 41-րդ կետի համաձայն այն ենթակա չէ շտկման, ուստի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության հայտը ենթակա է մերժման:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքին, Խորհուրդը գտնում է, որ այն նույնպես անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

<u>4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):</u>

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա ***<u>հայտով ներկայացվում է</u>*** վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.3 ենթակետով սահմանվել է, որ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): ***<u>Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Այսպիսով՝ Խորհուրդը գտնում է, որ համաձայն վերոհիշյալ նորմերի, հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի (ՀՀ ռեզիդենտ) և «Վանգաս» ՍՊԸ-ի (ԼՂՀ ռեզիդենտ) կոնսորցիումը հայտ է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթին:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտով ներկայացվել է լիազորագիր՝ սկանավորված տարբերակով, որով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Պետրոսյանը լիազորել է Էմմա Վասիլի Դաբաղյանին ... ստորագրել փաստաթղթեր՝ այդ թվում էլեկտրոնային եղանակով և ներկայացնել ընթացակարգի հայտեր ՀՀ օրենսդիր և գործադիր

իշխանության բոլոր ատյաններում, նախարարություններում, գերատեսչություններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հարկային և մաքսային մարմիններում:

Միևնույն ժամանակ նշված լիազորագրի վրա բացակայել է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը, առկա է միայն կնիքը: Միևնույն ժամանակ լիազորագրի, որպես հայտում ներառվող փաստաթղթի վրա առկա է Էմմա Վասիլի Դաբաղյանի էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Կոնսորցիումի հայտին կից ներկայացվել է նաև «Վանգաս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից Էմմա Վասիլի Դաբաղյանին տրված, ստորագրված և կնքված լիազորագիրը՝ սկանավորված տարբերակով, որով Էմմա Վասիլի Դաբաղյանը լիազորվել է «Վանգաս» ՍՊԸ-ի անունից ... ստորագրել փաստաթղթեր՝ այդ թվում էլեկտրոնային եղանակով և ներկայացնել ընթացակարգի հայտեր ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանության բոլոր ատյաններում, նախարարություններում, գերատեսչություններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հարկային և մաքսային մարմիններում:

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի և «Վանգաս» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացվել է գնային առաջարկ, որի վրա առկա է «Վանգաս» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը և Էմմա Վասիլի Դաբաղյանի էլեկտրոնային ստորագրությունը:

Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ***՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն

երկու փաստաթղթի համար՝ գնային առաջարկ և հայտի ապահովումը: Կարգի 41-րդ կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունն ենթակա է շտկման:

Այս տեսանկյունից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորագիրը վերոհիշյալ նորմերի համաձայն, հանդիսանում է հայտով ներկայացվող փաստաթուղթ և չի հանդիսանում գնային առաջարկ կամ հայտի ապահովում, ուստի դրանում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում, գործում է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ գնային առաջարկը սահմանված կարգով ստորագրված է «Վանգաս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից, ինչպես նաև հաստատված է «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտը ստորագրելու համար լիազորված անձ Էմմա Վասիլի Դաբաղյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Տվյալ դեպքում լիազորագրի անհամապատասխան լինելու հետևանքով գնային առաջարկն անհամապատասխան գնահատելու իրավական հիմք առկա չէ, քանի որ ինչպես արդեն նշվել է, Կարգի 41-րդ կետի հիման վրա լիազորագիրը հանդիսանում է հայտում ներառվող և շտկման ենթակա փաստաթուղթ, և անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ քննարկվող լիազորագիրը տրված է ոչ թե միայն գնային առաջարկը ստորագրելու համար, այլ ամբողջ հայտի փաթեթը ստորագրելու համար:

Դրա հետ մեկտեղ Խորհուրդն արդեն իսկ արձանագրել է, որ «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտը՝ հայտի ապահովման բանկային երաշխիքի մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին և Կարգի 41-րդ կետի համաձայն ենթակա չէ շտկման: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ մերժելով «Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի հայտը, գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բագրևանյան Ղողանջ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 20.02.2018թ. ներկայացված բողոքը և «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 27.02.2018թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**